

## **ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԶՐԿՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ\***

**Բանալի բառեր** – անվտանգային միջավայր, ցեղասպանական նպատակներ, 44-օրյա պատերազմ, մշակութային ցեղասպանություն, թուրքական անալոգիա, Արցախի ու Սյունիքի հայություն, արտաքին ուժային միջամտություն, հայրենիքի գաղափարի վերածնունդ:

Ուկրաինայի վերջին իրադարձությունները, գլխավայր շրջելով Հայաստանի անվտանգային միջավայրի խախտուտ հենասյունները, նորից տարածաշրջանային քաղաքականության օրակարգ վերադարձրին մեր լինել-չլինելու դարավոր հարցը:

Ի տարբերություն Առաջին աշխարհամարտի, երբ մեր հայրենիքի արևմտյան հատվածում ցեղասպանության ենթարկվեցինք պետություն չունենալու պատճառով, ներկայիս ռազմաքաղաքական կացության հիմնական բարդությունը տանուլ տրված պատերազմի ծանր ժառանգությունն է, որը կարող է ճանապարհ բացել Հայաստանի արևելյան հատվածի կորստյան համար: Իրենց պաշտպանական խորությունը կորցրած Արցախն ու Սյունիքը արևելքից դեռևս փակում են Հայաստանի թիկունքը, բայց նրանցից մեկնումեկի կորուստը կարող է ոչ միայն մյուսի, այլև **հայկական ամբողջի** խորտակման սկիզբը դառնալ: Այդ պատճառով խաղաղության դարաշրջան բացող փոխզիջման հնարավորություն ուրվագծելու համար հարկավոր է բանակցային սեղանին դնել ոչ թե ներկա խարխլված ստատուս-քվոն, այլ մեր ավելի քան մեկդարյա կորուստների **ողջ հանրագումարը**:

Հայոց ցեղասպանությունից հետո մեզ մնացած «հայկական ռեզերվացիայի» սահմանները հիմնվում են Մեծ եղեռնի արդյունքները «վավերացրած» ռուս-թուրքական հայտնի պայմանագրերի վրա, որոնք անվավեր են ճանաչվելու տարածաշրջանից այդ տերությունների դուրս մղվելու հետևանքով: Ուստի Թուրքիան Մոսկվայի, Կարսի ու Լոզանի պայմանագրերի 100-ամյակի նախօրեին ու ընթացքում Ադրբեջանի միջոցով ձեռնարկել է ու ձեռնարկելու է մեզա-

\* Ընդունվել է տպագրության 20.03.2022:

նից նորանոր «պարտավորագրեր պոկելու» քայլեր: Նպատակը պարզ է՝ իր ցեղասպանական գործիք Ադրբեջանի ձեռքերով արագացնել 44-օրյա պատերազմի արդյունքների վավերացումը՝ մեզանից Արցախը պոկելու, Նախիջևանի գավթումը լեզիտիմացնելու և Սյունիքը միջանցքայնացնելու խնդիրները լուծելու համար: Դա ապացուցվում է 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը տևած 44-օրյա պատերազմից հետո Արցախի ու Սյունիքի շուրջ, այսինքն՝ Հայոց Արևելից կողմերում, Ադրբեջանի ձեռնարկած ցեղասպանական քայլերի՝ **թուրքական ծագումնաբանություն** ունենալու փաստով: Այս առումով Ադրբեջանը, փաստորեն, **քաղաքական պատճենահանի** դեր է կատարում հսկայական փորձ ու հմտություն ունեցող Թուրքիայի համար: Դատելք ինքներդ.

- **44-օրյա պատերազմից** անմիջապես հետո հայտարարելով դարաբաղյան հակամարտության ավարտի և Ղարաբաղյան հիմնահարցի բանակցային հանգուցալուծման երաշխավոր ԵԱՀԿ Մինսկի խմբի ավելորդ լինելու մասին՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ձգբորտորեն պատճենել է 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով ու Բեռլինի կոնգրեսի որոշումներով միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցած Հայկական հարցի գոյությունը ժխտելու՝ սուլթան Աբդուլ Համիդի **առաջին ցեղասպանական քայլը**:

- **44-օրյա պատերազմից** հետո չընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» քաղաքական և անգամ «Լեռնային Ղարաբաղ» աշխարհագրական հասկացությունների գոյությունը՝ Բաքվի փոքրիկ սուլթանը մեր լուռ հայացքի առջև հասցրել է կրկնել նաև Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության խնդիրների շարքն անցնելուց հետո՝ 1880-ականների սկզբից, «Հայաստան» հասկացության գործածումն արգելած սուլթան Աբդուլ Համիդի **երկրորդ ցեղասպանական քայլը**:

- **44-օրյա պատերազմում** իր գավթած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարավարևմտյան շրջանները հռչակելով Ադրբեջանի Հանրապետության «Արևելյան Զանգեզուրի տարածաշրջան»՝ Աբդուլ Համիդի գործի նորօրյա ժառանգորդը այդպիսով իրականացրել է **երրորդ ցեղասպանական քայլը**՝ հայկական Սյունիքը գավթելու մտադրության լուսարձակումն ու «լեզիտիմացումը»:

- **44-օրյա պատերազմից** հետո պահանջելով Սյունիքի տարածքով էքստերիտորիալ միջանցքներ բացել Հայաստանի առաջին հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածք Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից իր գավթած հարավարևմտյան շրջանների միջև՝ Բաքվի փոքրիկ սուլթանը բացահայտել է նաև ժամանակին Հայոց ցեղա-

սպանության հիմնապատճառը դարձած պանթյուրքական երազանքի՝ Մեծ Թուրանի գաղափարի **արդիականությունը**:

- **44-օրյա պատերազմից** հետո պահանջելով Ղարաբաղում առկա հայկական զորամիավորումների, իսկ իրականում՝ ԼՂՀ ՊԲ կազմավորումը, Բաքվի փոքրիկ սուլթանը կրկնում է Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ Թալեաթ փաշայի հորինած՝ «**հայկական ավազակախմբերի**» կողմից խաղաղ մուսուլմանների հալածանքի առաջն առնելու կեղծ փաստարկը:

- **44-օրյա պատերազմից** հետո պահանջելով արագացնել Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանագատումն ու սահմանագծումը և այդպես փորձելով տիրանալ Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող ռազմավարական ուղիներին՝ Բաքվի փոքրիկ սուլթանը Թուրքիայի բացահայտ հուշարարությամբ ձգտում է լուծելու երկու խնդիր՝ **ա) ապահովել Հայաստանի հրաժարումը Նախիջևանի հանդեպ օրինական հավակնություններից, բ) մեր իսկ ձեռքերով բացել Հայաստանի մնացած տարածքի զավթման ռազմավարական ուղիներն ու հենակետերը**:

- **44-օրյա պատերազմից** հետո շարունակելով Արցախի հայկական մշակութային ժառանգության ոչնչացումն ու յուրացումը՝ Բաքվի փոքրիկ սուլթանը գործի է դրել Թուրքիայի Արևելյան բանակի հրամանատար Ֆյազիմ Կարաբեքիրի կողմից ժամանակին առաջադրված և ապա թուրքական պաշտոնական պատմագրության կողմից հիմնավորված «մեռելների միջոցով ապրողներին սպանելու» ֆաշիստական հնարքը: Ֆյազիմ Կարաբեքիրն ու թուրքական պատմագրությունը իրենց նախնիներ հռչակեցին Վանի բերդը կառուցած Ուրարտուի տիրակալներին, իսկ բունիաթովներն ու ալիևները՝ պատմական Աղվանքի բնակիչներին՝ մեռելների անունից ապրողների մշակույթը յուրացնելու կամ ոչնչացնելու, այսինքն՝ **մշակութային ցեղասպանության** իրականացման համար:

Հարց է ծագում՝ 44-օրյա պատերազմից հետո կարելի՞ է մատնանշել Ադրբեջանի որևէ հակահայկական նախաձեռնություն, որը չունենա իր **թուրքական անալոգիան**: Եթե ոչ, ապա դժվար չէ հասկանալ, որ դրանից հետո անցած մեկուկես տարվա ընթացքում Թուրքիան Ադրբեջանի ձեռքերով վերստեղծում ու հիմնավորում է Հայոց ցեղասպանության շարունակման բոլոր հիմնական՝ քաղաքական, հասկացութային, աշխարհագրական, գաղափարախոսական և մշակութային փաստարկներն ու հիմնավորումները: Ուստի հայտնվելով Թուրքիայի կողմից ուղղորդվող Ադրբեջանի նոր ագրեսիայի սպառնալիքի առջև՝ ներկա հանգրվանում մենք նախ և առաջ պետք է մտածենք տեղի ունեցողի իրավաքաղաքական գնահատականը տալու մասին:

Քանզի ներկա պայմաններում մեզ այս բարդագույն իրավիճակից կարող է դուրս բերել միայն **հայոց նոր ցեղասպանության սպառնալիքի միջազգային ընկալման ու ներազգային գիտակցման զույգ ազդակների սինքրոն փոխզործակցությունը**:

Նախ և առաջ դա նշանակում է ցեղասպանական նոր սպառնալիքի աշխարհագրական արեալի հստակեցում և դրա դեմ պայքարի ավելի կոնկրետ ու գործուն աշխատակարգերի սահմանում: Հիմնական սպառնալիքը, անշուշտ, **Արցախի ու Սյունիքի** հայության գլխին կախված իրական վտանգն է, որի հաղթահարման գլխավոր պայմանը հայոց նոր ցեղասպանությունը բացառող ազգային ու միջազգային կամքի կերտումն է՝ նոր բանակի ձևավորման, արտաքին քարոզչության ակտիվացման ու դրանում աշխարհասփյուռ հայության ներգրավման միջոցով:

Թեև մեր թշնամին այսօր համոզված է, որ Ուկրաինայի շուրջ մահացու գոտեմարտի մեջ հայտնված տերությունները չեն միավորվի հայկական օրակարգի շուրջ, Հայաստանի Հանրապետությունն ու համաշխարհային հայությունն ունեն նման միավորում առաջ բերելու հնարավորություն, քանզի նոր ցեղասպանությունը կանխելու հարցում միջազգային հանրությունը միանակն է: Մեր տարածաշրջանում Թուրքիայի նման փորձառու ցեղասպանի և արյան վրեժով առաջնորդվող ադրբեջանցի բարբարոսների ցեղասպանական նկրտումները կարող են գործի դրվել գլոբալ դիմակայության կուլմինացիոն պահին, եթե, մենք չնտածենք ներազգային հարթությունում ներկա պառակտման արագ հաղթահարման և Հայաստանի շուրջ ողջ հայության համախմբման մասին:

Այս խնդրի լուծման առաջին պայմանը արտաքին-քաղաքական հակադիր արևելումների հիմքի վրա ձևավորված Հայաստանի ներկայիս տզեղ ներքաղաքական իրողությունների անվերապահ ստորադասումն է ազգային միասնության սկզբունքին: Այս դժվարին պահին անգամ ոմանք չեն կարողանում կամ չեն ցանկանում գիտակցել, որ իրենք նախ և առաջ հայեր են և ապա՝ ռուսամետներ կամ արևմտամետներ, ուստի նրանց քարացած ուղեղներում պետք է «ներբեռնել» դեկարտյան «**ճշմարտություններից առաջինը գոյությունն է**» բանաձևը, որովհետև վաղը ցեղասպան թուրքը ռուսամետին չի զանազանելու արևմտամետից:

Ցեղասպանության նոր սպառնալիքի առկայության պայմաններում հստակ բանաձևման և միջազգայնացման կարիք է զգում նաև թուրքերի հետ մեր դարավոր հակամարտության բուն պատճառը՝ նրանց **հայրենիք չունենալու** փաստը: Տեղաբնիկներին ոչնչացնելու և նրանց հայրենիքներին տիրանալու մոլուցքը թուրքի համար ոչ թե սոսկ նվաճողական քաղաքականություն է, այլ

անհայրենիք մարդու կենսակերպ<sup>1</sup>: Հայրենիքը նախ և առաջ սեփականի և օտարի տարբերության գիտակցումն է, որը ժամանակին փորձեց թուրքերին ներարկել է Քենալ Աթաթուրքը, բայց քանի որ նրա ստեղծած արհեստական կաղապարներն այսօր փլուզվում են, առաջ է գալիս անատոլիական ինքնության կողքին Նախիջևանից մինչև Արցախ **նոր տարածական ինքնության** ձևավորման գաղափարը, որի օգնությամբ Թուրքիան ու Ադրբեջանը մտադիր են ավարտել Հայոց ցեղասպանությունը: Ուստի թուրքի հայրենիք չունենալու փաստը կրկին սկսել է քողարկվել զանազան «շարժական վաթաններ» հորինելու և նրանց համար «Չեհիդանալու» տվյալանքներով: Նման խորհրդանիշներով առաջնորդվելու վկայություն են այս տարի Շուշիի «հիմնադրման» 270-ամյակը նշելու փորձերը: Բայց եթե միջնադարյան հայկական ոստանում քոչվորական Փանահի հայտնվելը դիտվում է որպես քաղաքի հիմնարկեք, ապա «թուրքական աշխարհի մշակութային մայրաքաղաքները» սոսկ շարժական կրկեսի բեմահարթակներ են, իսկ Ալիևն ու Էրդոհանը՝ սովորական ծաղրածուներ:

Սա ցույց է տալիս, որ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Նախիջևանից մինչև Արցախ նոր տարածական ինքնության ձևավորման թուրքական ցեղասպանական ծրագրի իրականացման մտադրությունը **կապ չունի** խաղաղության դարաշրջան բացելու կամ ազգ-բանակի վերածվելու մեր սեփական երկրնտրանքի հետ: Դրա իրականացումը շարունակվելու է մեր կամքից անկախ և այնքան ժամանակ, քանի դեռ Հայոց ցեղասպանության ժամանակներից անփոփոխ թուրքական ֆաշիզմը հակահարված չի ստացել **միջազգային ուժային միջամտությամբ**:

Նախիջևանից մինչև Արցախ թուրքական ցեղասպանական ծրագրի հակառակորդների գումարային ուժը շատ ավելի մեծ է, քան թուրքերի իրական հնարավորությունները: Բայց մեզ համար դրա օգտագործման հնարավորություններ են բացվելու միայն Ուկրաինայում Ռուսաստանի ու Արևմուտքի դիմակայության հերթական շրջափուլի ավարտից հետո: Մենք պետք է դիմանանք մինչև ներկա պատերազմի ակտիվ փուլի մոտավուտ ավարտը՝ որսալու համար համաշխարհային քաղաքականության **հիմնական թրենդը**, որպեսզի նորից չհայտնվենք **պարտվողների ճամբարում**: Ուստի Հայոց նոր ցեղասպանության սպառնալիքի միջազգային ընկալման ու ներազգային գիտակցման սինքրոն գործակցությունն ապահովելու համար Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հարաբերություններում ներկայումս չպետք է գնանք որևէ կոնկրետ պայ-

1 Դա ապացուցվում է թեկուզ այն պարզ իրողությամբ, որ անգամ այսօր՝ 21-րդ դարում, թուրքերենում ու ադրբեջաներենում չկա «հայրենիք» հասկացությունը, որին չի կարող փոխարինել ո՛չ արաբերենից փոխառված «վաթան»-ը և ո՛չ էլ քոչվորականին բնորոշ «անա յուրթ»-ը:

մանագրային պարտավորության ամրագրմանը: Հայաստանն իրավունք ունի հրաժարվելու Հայոց ցեղասպանության փաստը ժխտող Ադրբեջանի ու Թուրքիայի հետ նոր պարտավորությունների ստանձնումից, քանզի հին հանցագործությունը ժխտողը **սկզբունքորեն** չի կարող բացառել նորի կրկնությունը:

Ավելին՝ հաղթողների դաշնակցի դերը ստանձնելու և Ադրբեջանի ու Թուրքիայի համար պարտվողների տեղն ամրագրելու նպատակով այսօրվանից հարկավոր է միջազգային դիվանագիտության օրակարգ տեղափոխել տարածաշրջանի **թույլ օղակի** հիմնական հաղթաթուղթը՝ 1920-1921 թթ. ռուս-թուրքական հայտնի գործարքների 1939 թ. Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի նախատիպը լինելու փաստը:

Գլոբալ տեղաշարժերի ժամանակ հաղթողները պարզում են **արդարության դրոշը**, ուստի տարածաշրջանի թույլ օղակի համար վրա է հասնում ռուս-թուրքական հետցեղասպանական կոնցենսիուսի բողոքարկման **ամենահարմար պահը**, որովհետև եթե 2022-ը ճակատագրական տարի է Ռուսաստանի, ապա 2023-ը՝ Թուրքիայի ղեկավարության համար:

Խմբ.

## THE DANGER OF A NEW DEPATRIATION

**Key words** - secure environment, genocidal goals, 44-day war, Turkish analogy, Armenians of Artsakh and Syunik, international force intervention, idea of Homeland, civilizational frontier.

Edit.

## УГРОЗА НОВОГО ПАТРИЦИДА

**Ключевые слова** – среда безопасного существования, геноцидальные цели, 44-дневная война, культурный геноцид, турецкая аналогия, армянство Арцаха и Сюника, международное силовое вмешательство, возрождение идеи Родины, цивилизационный рубеж.

Ред.